ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Կ. Գ. ՂԱՖԱԴԱՐՅԱՆ

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Հայաստանում պատմական անցյալի վերաբերյալ նյութական մշակույթի մնացորդներն այնքան շատ են և բազմատեսակ, որ դիտնականները մեր երկիրը նմանեցրել են բաց երկնքի տակ դտնվող թանգարանի։ Սակայն Հայաստանը հնագույն ժամանակներից սկսած ունեցել է թանգարաններ։

Հայտնի է, որ աշխարհի թանգարանային տիպի առաջին հաստատությունները Հունաստանի և Հռոմի մուսաների տաճարներն են եղել, որոնցից էլ թանգառանները ժառանգել են իրենց հունարեն մուզեոն և լատիներեն մուզեում անունները։

Հայաստանն էլ իր հեթանոս աստվածների տաճարներում ունեցել է արվեստի անբավ առարկաներ, աստվածների և թագավորների ոսկեձույլ և մարմարակերտ արձաններ, որոնք իրենց արվեստով հետ չեին մնում հունական և հռոմեական գյուխգործոցներից։

Ուրարտական տաճարները Հայաստանի սկզբնական այն հաստատություններն էին, որոնցում հավաքվել են արվեստի հնագույն կոթողները։ Առաջին տեղեկությունն ուրարտական տաճարների մասին վերաբերում են VIII դ. մ. թ. ա., որ հաստատվում են հնագույն էրեբունի ամրոցի պեղումներով, առավել ուշ ժամանակինը՝ Թեյշեբաինի քաղաքից է (VII դ. մ. թ. ա.), իսկ գրավոր հնագույն տեղեկությունը պատկանում է մ. թ. ա. 714 թ.։

Այդ թվականին ասորեստանյան թագավոր Սարգոնը մեծ զորաբանակով հարձակվում է Նաիրի երկրի վրա և հաղթանակով վերադարձի ճանապարհին, ավարառության նպատակով, հարձակվում է ուրարտական Մուսասիր քաղաքի վրա։ Այժմ Լուվրի թանգարանում պահվող սեպագիր կավե տախտակի վրա Ասորեստանի գոռող թագավոր Սարգոնը գրել է, որ մուսասիրցիք «իմ առաջ չորեքթաթ էին ման գալիս, լալիս էին ու աղաչում, որ խնայեմ նրանց կյանքը»։ Ապա շարունակում է, որ պետական գանձատները կողոպտելուց հետո իր մոտիկ և վստահելի մարդկանց ուղարկել է Խալդ աստծու տաճարը, որտեղ շատ ավելի թանկարժեք և բարձրարվեստ առարկաներ են եղել, քան պետական գանձատան մեջ։

Սարգոնն այդ տաճարում ձեռք է բերել մեծ քանակությամբ ոսկի (կոնկրետ թվերը չեն պահպանվել), 162 տաղանդ 20 մին արծաթ (մոտ կես տոննա), մեծ քանակությամբ պղինձ և այլն։ Այնտեղ եղել են ուրարտական թագավորների բրոնզե մեծ արձաններ, որոնց թվում Մուսասիրի իշխանի արձանը, ինչպես նաև ցուլերի, կովերի, առյուծների բազմաթիվ արձանիկներ։

Սարգոնը հրամայել է այդ «անթիվ ու անհամար» հարստությունները տանել Ասորեստան, իսկ Մուսասիրի բնակիչներին դնել ծանր հարկերի տակ։

Պեղումների ժամանակ Դուր-Շարուկին քաղաքում (այժմյան Խորսաբատի տեղում, Իրաք) գտնված պղնձե քանդակներում պատկերված է Մուսասիրի տաճարի կողոպուտը, որ համապատասխանում է Լուվրի սեպագիր տախտակի նկարագրությանը։ Քանդակավանդակի կենտրոնում տաճարն է, ձախ վերին անկյունում նստած է ասորեստանյան պաշտոնյան, որ հետևում է տաճարից դուրս բերվող առարկաների հաշվառմանը։ Նրա առջև կանգնած երկու գրագիրներից մեկը ավարի ենթարկված առարկաների թիվն ու քաշը սեպագրում է կավե տախտակի վրա, իսկ մյուսը՝ նույնը կատարում է պապիրուսի վրա՝ արամերեն գրերով։

Պեղումների ժամանակ և պատահականորեն գտնված արվեստի առարկաները ցույց են տալիս, որ ուրարտացիք ունեցել են բարձր և ժամանակի համար համաշխարհային արժեք ներկայացնող արվեստ։

Վանի Դարաբեյ գյուղում գտնվել է Ուրարտուի գեղեցկության և պտղաբերության աստծո բրոնզե արձանիկը, Կարմիր բլուրում՝ ռազմի աստծու արձանիկը, Էրեբունիում՝ Խալդ աստծո որմնանկարը (նա պատկերված է առյուծի վրա կանգնած)։ Արվեստի սքանչելի գործեր են ուրարտական հնավայրերում գտնված բրոնզե արքայական սաղավարտները, հսկայական դրվագված բոլորշի վահանները, ձիու, առյուծի, ցուլի արձանիկները, ոսկե զարդերը և այլն, որոնք այսօր զարդարում են մեր թանգարանները։

* * *

Հեթանոս հայերը, սկսած մեր թվականությունից առաջ VI—V դդ. ունեցել են իրենց տաճարները, որոնք բոլորն էլ քանդվել կամ քրիստոնեական եկեղեցու են վերածվել քրիստոնեության մուտքից հետո՝ IV դ. սկզբին։

Հայաստանի հեթանոսական սրբավայրերի ճարտարապետության մասին գաղափար կարելի է կազմել Գառնիի հեթանոսական տաճարի ավերակների միջոցով։ Քրիստոնեության մուտքի ժամանակ այդ տաճարը չի կործանվել շնորհիվ այն բանի, որ կառուցված է եղել հայ թագավորների ամառանոցային արքունիքում։ Վերացրել են միայն նրա մեջ եղած հեթանոսական սրբությունները և շենքը օգտագործել աշխարհիկ նպատակների համար։ Այդպիսի շենքեր շատ են եղել Հայաստանի անտիկ քաղաքներում և սրբավայրերում, որոնց հետքերը ի հայտ են գալիս անգամ միջնադարյան վաղագույն եկեղեցիների հիմքերում (Էջմիածնի տաճար, Հռիփսիմե)։

Ագաթանգեղոսը (V դ.) իր պատմության բազմաթիվ էջերում խոսում է Հայաստանի հեթանոսական մեհյանների մասին, որոնք ունեցել են ոսկեձույլ արձաններ և շատ այլ առարկաներ։ Քրիստոնեություն տարածող Գրիգոր Պահլավունին, հայոց Տրդատ թագավորի, վրաց, աբխազաց և ալանաց թագավորների մասնակցությամբ շրջել է ամբողջ Հայաստանը, քանդել մեհյանները, արձանները ջարդոտել և թանկարժեք առարկաներն իր հետ տարել։

Այդ է պատճառը, որ այսօր Հայաստանի անտիկ քաղաքների պեղումների ժամանակ (Գառնի, Արտաշատ) գտնվում են Անահիտ աստվածուհու պաշտամունքին նվիրված մարմարե սքանչելի արձաններ, որոնց գլուխները,

թևերը ջարդոտել և գցել են հողի մեջ։ Ագաթանգեղոսը գրում է, որ Գրիգորի առաջնորդությամբ քրիստոնեություն տարածողները մտնում են հեթանոսական Հայաստանի կրոնական կենտրոն Երեզ (Երիզա-Երզնկա) ավանը «ի տեղիս պաշտամանցն յԱնահտական մեհենին» և այնտեղ «փշրէին զոսկի պատկերն Անահտական կանացի դիցն. և ամենևին զտեղին քանդեալ վատնէին. և զոսկին և արծաթն աւար առեալ»[1]։ Հիշատակում է բազմաթիվ վայրեր, ուր նույն ավերածությունն են կատարել (Թիլ, Բաղայատիճ, Հաշտիշատ և այլն)։

Գրիգոր Պահլավունին Կեսարիայում եպիսկոպոս ձեռնադրվելուց հետո լսում է, որ «Վահէվանեան մեհեանն մնացեալ է յերկրին Տարօնոյ, մեհեանն մեծագանձ, լի ոսկւով և արծաթով, և բաղում նուէրք մեծամեծ թագաւորաց ձօնեալ անդ»[2]։ Այստեղ ևս Տրդատը քանդում և ավերում է մեհյանը։

Նշանակում է հին և հնադույն Հայաստանի մեհյանները, սկսած ուրարտացիների ժամանակներից, հունա-հռոմեական տաճարների նման, բայց նրանցից էլ առաջ, եղել են արվեստի, դպրության, ճարտարության կենտրոններ։

Հայոց Տիր աստվածը, նույն դերն է ունեցել, ինչպիսին ունեցել են հունական մուսաները։ Տիրն իր մեջ մարմնավորել է դպրության, գիտության, արվեստների և ճարտարության աստվածությունները, որի գլխավոր տաճարը գտնվել է Վաղարշապատից դեպի Արտաշատ տանող ճանապարհի վրա՝ Զվարթնոցում։ Սա մեծ ուխտատեղի է եղել հեթանոս հայերի համար մինչև VII դ. կեսերը, երբ Ներսես Տայեցին այնտեղ կառուցեց հռչակավոր ս. Գրիգոր եկեղեցին, որ այժմ հեթանոսական անվանումով Զվարթնոց է կոչվում։

Նշանակում է՝ հեթանոսական Հայաստանում արվեստի գլուխգործոցները պահվել են Զվարթնոցում, և շատ այլ տաճարներում, որոնք նվիրված են եղել Տիր և մյուս աստվածների պաշտամունքին։

Միջնադարյան Հայաստանն արդեն ունեցել է իր իսկական թանգարանները, որոնք երեք տարբեր կարգերի են բաժանվել՝ արքունի, իշխանական տների և եկեղեցական թանգարաններ։

Արքունի թանգարանների գոյության մասին կարևոր տեղեկություն է հաղորդում X դ. մատենագիր Հովհաննես Դրասխանակերտցին։ Նա պատմում է Նախճավան քաղաքի վեճի մասին, որ ծագել էր Վասպուրականի Արծրունյաց և Սյունյաց իշխանությունների միջև։

Գագիկ Արծրունի իշխանը Սմբատ Բագրատունուց խնդրում է Նախճավան քաղաքը հանձնել իրենց պատճառաբանելով, որ հնում իրենց է պատկանել. Սմբատն այդ քաղաքն արդեն տվել էր Սյունյաց իշխաններին և մերժում է Գագիկ Արծրունու խնդիրը։ Վերջինս դիմում է Ատրպատականի Յուսուֆ ոստիկանին խնդրելով, որ Վասպուրականն անջատի Հայաստանից և ճանաչի իբրև ինքնուրույն թագավորություն։ Ոստիկանը ստանալով մեծամեծ նվերներ, համաձայնում է, իսկ հայոց թագավորը մի խումբ նախարարների հետ միասին, Հովհաննես կաթողիկոսին մեծ նվերներով ուղարկում է

---

1 Ագաթանգեղայ Պատմութիւն հայոց, Թիֆլիս, 1914, էջ 399—400։
2 Նույն տեղում, էջ 410։

Յուսուֆի մոտ, որպեսզի Արծրունյաց իշխանությունը թողնի Հայաստանի կազմի մեջ։

Դրասխանակերտցին Յուսուֆին կաշառելու համար իր հետ ձիերին և ջորիներին բարձած տանում է արքունի թանգարաններից վերցրած բազմաթիվ առարկաներ, որոնց թվում՝ տպեճամուկ զգեստներ, նկարակերտ բանվածքներ, զարդարուն զենքեր և զարդեր, ոսկու և արծաթի գանձեր։ Արքունի թանգարանների գանձերին նա ավելացրել էր նաև եկեղեցական թանգարաններից վերցրած բազմաթիվ առարկաներ։

Դրասխանակերտցին նշում է, որ իշխանական տներն էլ իրենց հարուստ թանգարաններն են ունեցել։ Նա գրում է, որ երբ Գագիկ Արծրունին իմանում է Դրասխանակերտցու տարած ընծաների մասին ինքն էլ իր հերթին, երկրորդ անգամ մի ամբողջ թանգարանի չափ նվերներ է տանում նրան («ի լիակատար թանգարանաց իմն նմա ընծայաբերեալ»[3])։

Հայաստանի եկեղեցական թանգարանների գոյության մասին մեր ձեռքի տակ եղած մատենագրական ստույգ տեղեկությունները վերաբերում են ավելի վաղ ժամանակներին՝ մեր թվականության VII դ. սկզբներին։

Մովսես կաթողիկոս Եղվարդեցու (574—604) մահվանից հետո, մինչև նրա հաջորդ Աբրահամի ընտրությունը, տեղապահ Վրթանես Քերթողը միաժամանակ եղել է կաթողիկոսարանին կից թանգարանի ավանդապահը։ Այդ պաշտոնը ճշտիվ համապատասխանում է եվրոպական կոնսերվատոր և ռուսական խրանիտել (хранитель) կոչումներին, որոնցով կոչվում են թանգարանապետերը։

Քիչ թե շատ եկամտավոր եկեղեցիներն, սկսած V դ., ունեցել են ավանդատներ, որոնց մեջ պահպանվել են եկեղեցական թանկարժեք զգեստներ, մարգարտակուռ թագեր ու վակասներ, ոսկե և արծաթե տկիհներ, արծաթակազմ մագաղաթյա ձեռագրեր և այլ բարձրարվեստ գործեր, իսկ մեծ վանքերը, ինչպես, օրինակ, Սանահնի վանքը, Հաղբատը, Հավուց թառը, ունեցել են այդ նպատակի համար հատուկ կառուցած գանձատներ, որոնց մեջ պահվել է հարստությունը։ Տեղեկություններ կան, որ Զվարթնոցն ունեցել է ցուցադրական սրահ, որտեղ բացի եկեղեցական առարկաներից դրված է եղել նաև Գրիգոր Լուսավորչի մատունքը։ Հայաստանի միջնադարյան թանգարաններից մեկն էլ էջմիածնի եկեղեցական թանգարանն է, որ հիմնադրվել է XV դ. կեսերին։

Նոր ժամանակներում հայկական թանգարան հիմնելու մասին գրավոր տեղեկություններ ունենք սկսած XIX դ. կեսերից։

Այդ չի նշանակում, թե միայն այդ ժամանակ է զգացվել թանգարան ունենալու անհրաժեշտությունը, այլ XIX դ. կեսերին է, որ գործնական քայլեր են արվել հայկական թանգարան ստեղծելու համար։ Մինչ այդ էլ էջմիածնում, Կարնո եկեղեցական առաջնորդարանում, Երուսաղեմում, Մխիթարյան միաբանության վանքում գոյություն ունեին եկեղեցական թանգարաններ։

Առաջին թանգարան հիմնողն Անդրկովկասում, ռուսական տիրապետության օրոք, եղել է հայ մեծ լուսավորիչ Խաչատուր Աբովյանը։ Նա 1846 թ.,

---

3 Յովհաննէս Դրասխանակերտցւոյ Պատմութիւն հայոց, Թիֆլիս, 1912, էջ 210։

Երևանի գավառական դպրոցին կից հիմնել է այսպես կոչված «Հայկական հնությունների կաբինետ»:

Այդ կաբինետի հիմնադրմանն է վերաբերում Վրաստանի պետական պատմական կենտրոնական արխիվի Մ. Ս. Վորոնցովի փոխարքայության № 194 գործը՝ «Երևանի գավառական դպրոցին կից հայկական հնությունների կաբինետ (սրահ) հիմնելու վերաբերյալ Կովկասյան ուսումնական մասի զեկուցագրի մասին»:

Գրությունը, որ ուղղված է «Կովկասի պարոն փոխարքա և Նովորոսիայի և Բեսարարիայի ընդհանուր նահանգապետին», ունի հետևյալ բովանդակությունը։

«Երևանի գավառապետը տեղեկացրել է դպրոցների դիրեկտորներին, որ նա ցանկանում է պահպանել ինչքան հնարավոր է Հայաստանի հետաքրքրաշարժ հնությունների և պատմական հուշարձանների մնացորդները, որոնք այնքան շատ են նրան ենթակա գավառում, և տեղի բնակիչները հանդգնում են հափշտակել իրենց կառույցների մեջ օգտագործելու համար։ Այդպիսով, նրա հրամանով բռնվել են Թաշ-Գառնիի սահմաններից բերված չորս գեղեցիկ սյունախոյակներ, որտեղ, ինչպես հայտնի է պատմությունից և ավանդություններից, եղել է Տրդատի հոյակապ պալատը, և տարվել են գավառական դպրոցի մոտ դրվել։ Այնուհանդերձ նա պատշաճ է համարում. գավառական դպրոցին կից հիմնել մի սրահ (կաբինետ), որտեղ կզետեղվեն երկրում հայտնաբերված հնություններն ու պատմական արձանագրությամբ քարաբեկորները, ինչպես նաև բնության բոլոր հրաշալիքները։

Սրա հետևանքով, դպրոցների դիրեկտորը հրամանագրեց Երևանի գավառական դպրոցում տեսչի պաշտոնը վարողին, որպեսզի նա ընդունի դավառապետի ուղարկած բոլոր մնացորդները և հնության հուշարձանները, և ընդհանրապես բնության բոլոր հետաքրքրաշարժ արտադրանքը։ Հանգամանորեն կատարելով նրանց նկարագրությունը և գույքավորումը և այդ բոլորից կազմակերպելով կաբինետ։

Ինչի մասին պատիվ ունեմ հաղորդելու Ձերդ պայծառափայլություն ի գիտություն։

Գեներալ մայոր (ստորագրություն)»[4].

Երևանի գավառական դպրոցի տեսուչը, որին հանձնարարված էր հնությունների սրահի կազմակերպումը այդ տարիներին, ինչպես հայտնի է, եղել է հայ մեծ լուսավորիչ Խաչատուր Աբովյանը:

Այդ կարևոր գործը, դեռևս իր սաղմնային վիճակում, խափանվեց. երկու տարի հետո՝ 1848 թ., Խ. Աբովյանը անհետ կորավ (ապրիլի 14-ին[5])։

Այնուամենայնիվ այդ գործը Աբովյանի կենդանության օրոք, որոշ ըն-

---

[4] Л. М. Меликсет-бек, Из истории археологических изысканий в Армении, «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1947, № 6, էջ 45—47։

[5] Փոխարքային ներկայացված զեկուցագրի մեջ ոուս պաշտոնյաներն իրենց դերը մեծացրել են, իսկ Աբովյանի անունն անգամ չեն հիշատակել, համարելով նրան հրաման կատարող գավառային դպրոցի տեսուչ։

Եթե հնությունների սրահի կամ այժմյան անունով թանգարանի հիմնադրման նախաձեռնողները ցարական պաշտոնյաները լինեին, Խ. Աբովյանի անհետացումով այդ գործը չէր խափանվի։

թացք ստացել էր, հետագայում նշված չորս խոյակները տեղափոխվել են Էջմիածին, բայց ե՞րբ և ո՞ւմ ձեռքով, մեզ անհայտ է։

* * *

1857 թ. Մկրտիչ վարդապետ Խրիմյանը Վասպուրականում նշանակվեց Վարագա վանքի առաջնորդ։

Այնտեղ նա հասարակական-կրթական լայն գործունեություն ծավալեց։ Ժողովուրդը սիրեց այդ լուսամիտ հոգևորականին և նրան պատվեց Հայոց Հայրիկ մականունով։ Նա Վարագավանքում բացեց իր ժամանակի համար առաջադիմական դպրոց, կարողացավ տպարան ունենալ և հրատարակել «Արծուի Վասպուրականի» հանդեսը (1855-ին հիմնվեց Կ. Պոլսում, իսկ 1858-ին տեղափոխվեց Վան)։

Այդ ժամանակ էլ (1858 թ.) նա Վարագավանքում հիմնեց թանգարան։ Դա առաջին հայկական թանգարանն էր՝ Աբովյանի փորձից հետո։ Թանգարանը թեև վանքին կից էր, բայց միայն եկեղեցական բնույթ չէր կրում. եկեղեցական առարկաների կողքին կային նաև աշխարհիկ և անգամ հեթանոսական շրջանի իրեր, որոնցից մեկը, ի դեպ, լուրջ միջադեպի պատճառ դարձավ։

Խրիմյանի կենսագիր Խ. Մալումյանը այդ առթիվ հետևյալ դրվագն է պատմում.

«Վարագում Խրիմյան հիմնել էր մի թանգարան, որտեղ նա հավաքում էր Հայաստանի զանազան կողմերից հին ձեռագիրներ, և այլ հնություններ։ Մի անգամ մի հովիվ գտել էր մետաղյա կիսարձան։ Խրիմյան մեծ դժվարությամբ կարողացավ ձեռք բերել այդ կիսարձանը, որը, ինչպես ենթադրում էին, հեթանոս Հայաստանի կուռքերից մինի կիսարձանը պիտի լիներ։ Այդ կիսարձանը Խրիմյանը դրեց թանգարանում, որտեղ ի միջի այլոց կային հին ավետարաններ։

Եվ ահա Խրիմյանի թշնամիները սկսեցին համոզել ամբոխին, թե Խրիմյանն իր աշակերտների հետ միասին կուռք է պաշտում, որը պահում է քրիստոնեական ավետարանի կողքին։ Բանն այնտեղ հասավ, որ մի օր՝ ամբոխը պատրաստվում էր գնալ Վարագ՝ և քարուքանդ սնել կռապաշտների մեհյանը՝ թանգարանը, Խրիմյանն հազիվ հազ կարողացավ համոզել ժողովրդին, թե այդ բոլորը սուտ է և շինծու»[6]։

Այդպիսի մոլեռանդության և տգիտության պայմաններում թանգարան հիմնելն ու պահելը հերոսություն էր և կրթական կարևոր գործ։

Ըստ մեր ունեցած տեղեկությունների XIX դ. երկրորդ կեսին թանգարան հիմնելու փորձեր են արվել նաև այլ տեղերում։ Օրինակ, 1872 թ. Վահան վարդապետ Բաստամյանը, որ հայագիտության մեջ հայտնի է Մխիթար Գոշի Դատաստանագրքի հրատարակությամբ, Գայանեի վանքի առաջնորդարանում հիմնել էր հնագիտական և ազգագրական թանգարան, որտեղ ի ցույց էր դրել հին դրամներ, ձեռագրեր և հին տպագիր գրքեր, ասեղնագործած զգեստներ և այլ իրեր։

Բաստամյանի հիմնադրած թանգարանը ևս երկար կյանք չունեցավ.

---

6 Խ. Մալումյան, Խրիմյան, կենսագրական ակնարկ, Թիֆլիս, 1898, էջ 58։

Բաստամյանի Գայանեի վանքից հեռանալուց հետո նորեկ վանահայրերն այդ գործի նկատմամբ անտարբեր գտնվեցին։

Էջմիածնի Գևորգյան թանգարանը հիմնադրվել է 1868 թ. Գևորգ IV կաթողիկոսի ձեռքով։ Նա նորոգեց տաճարի արևելյան խախտված պատը և խորանի հետևում հիմնեց երեք սրահներից բաղկացած թանգարան։ Այնտեղ են տեղափոխվում մինչ այդ տաճարի արևելյան կողմի երկու փոքրիկ ավանդատների մեջ հավաքված թանգարանային իրերը, ինչպես Մանուկ Աբեղյանն է գրում, այդ ավանդատներում «եկեղեցական սպաս, զարդ, անոթ, սբոց նշխարներ, եկեղեցական զանազան հնություններ իրար վրա խառնիխուռն դարսված պահվում էին, այնտեղ էին և եկեղեցականների զգեստներն, ուր զգեստավորվում էին կաթողիկոս, եպիսկոպոս, վարդապետ»[7]։

Թանգարանում Գեորգ IV այդ իրերը ցուցադրում էր հատուկ շինած փայտե պահարաններում, իսկ թանգարանի մուտքը մնում էր եկեղեցու միջից։

Թանգարանի հարավային սրահը հատկացված էր ամենօրյա գործածության զգեստներին և սպասքին, միջինը, որ ընկած է տաճարի ավագ սեղանի ետևը, եկեղեցական մասունքներին՝ Գեղարդ, Լուսավորչի աջ, Նոյան տապան և այլն, իսկ հյուսիսային սրահը հատկացված էր թանգարանի մի այլ բաժնի, որտեղ ընկուզյա մեծ պահարանների մեջ ցուցադրվում էին գործածությունից հանված եկեղեցական թանկագին հնություններ՝ Մեռոնի հին կաթսաներ, արծաթյա խաչեր, եպիսկոպոսական գավազաններ, կաթողիկոսական ասուներ, ասեղնագործ և մարգարտաշար խույրեր, վակասներ, թաղպաներ, եմիփորոներ, ուրարներ, շուրջառներ, հայրապետական ադամանդազարդ կոնքեռ, սկիհներ, մասունքներով խաչեր, աջեր և այլ առարկաներ։

Այնուհետև, իր հիմնած թանգարանը հարստացնելու նպատակով, Գեորգ IV մեծ ջանք է գործադրում զանազան վայրերից եկեղեցական և աշխարհիկ հնություններ հավաքելու համար[8]։ Մեծանուն գիտնական Մանուկ Աբեղյանի վկայությամբ, Գեորգ IV «կաթողիկոսն իր ունեցած հնությունները նվիրելով Մայր աթոռին՝ հետևում է ուրիշ տեղերից ևս եկեղեցական հնություններ ժողովելու, ինչպես Կ. Պոլսից, Աստրախանից, Նոր Նախիջևանից, նույնպես Ամստերդամի եկեղեցու հնություններն և կաթողիկոսի հորդորանքով ուրիշ զանազան նվերներն։ Այժմյան հնությունների մեծագույն մասը Գեորգ կաթողիկոսի ջանքերով են ժողովված»[9]։

Այդ թանգարանը, որի միայն հյուսիսային սրահում էր ցուցադրում կազմակերպված, երկար տարիներ պահպանվեց գրեթե առանց փոփոխության։ Միայն 1955 թ., երբ պետական միջոցներով էջմիածնի տաճարը և հարակից վանական շինությունների մի մասը վերանորոգվեցին, թանգարանին տրամադրվեց Գեորգ IV կառուցած շենքն իր երեք սրահներով և կազմակերպվեց նոր ցուցադրություն։ Այսպես առաջին անգամ ցուցադրվեցին մինչ այդ թիթեղապատ բազմաթիվ սնդուկների մեջ պահվող եկեղեցական իրե-

---

7 Գեորգ Դ մեծագործ կաթողիկոս ամենայն հայոց, գրեց՝ Մ. Աբեղյան, Վաղարշապատ, 1899, էջ 50։

8 Մաղաքիա արքեպ. Օրմանյան, Ազգապատում, մասն Գ, Երուսաղեմ, 1927, էջ 4243։ Աբրահամ [Զամ[ինյան], Հայոց եկեղեցու պատմություն, Նոր Նախիջևան, 1909, էջ 168։

9 Գեորգ Դ մեծագործ կաթողիկոս..., էջ 51։

ը։ Վանքում հաստատվեց թանգարանապետի և նրա օգնականի պաշտոնները։ Այս թանգարանին միացվեցին նաև տաճարի ավագ սեղանի տակ բացված հեթանոսական տաճարի ավերակները, որոնք հետաքրքիր են իրենց թոնրաձև կրակարանով և ապացույց այն բանի, որ էջմիածնի տաճարը կառուցված է հեթանոսական մեհյանի տեղում, որի մասին մինչ այդ տեղեկություն չունեինք։

Եկեղեցական թանգարաններ ունեն Երուսաղեմի և Պոլսի պատրիարքարանները, Վենետիկի Մխիթարյանները, Անթիլիասի կաթողիկոսությունը և այլն։

Թանգարանային առարկաներով հարուստ են Երուսաղեմի և Վենետիկի հայկական վանքերը։ Երուսաղեմն, օրինակ, ունի 4000-ի չափ հայկական հին ձեռագիր գրքեր, որոնց թվում Թորոս Ռոսլինի նկարազարդած մի քանի գլուխգործոցներ։ Ունի ոսկյա և արծաթյա զարդարուն սկիհներ, բազմաթիվ ասեղնագործ և թանկարժեք քարերով ու մարգարիտով զարդարված սփռոցներ, զգեստի մասեր։ Այդ վանքն իր թանգարանային իրերով, համարվում է եկեղեցական արժեքների գանձարան։

Սակայն եկեղեցական թանգարանները ժողովրդին չեն տալիս այն ամենը, ինչ հարկավոր է նրան։

Անհրաժեշտ է, որ թանգարանը բազմակողմանիորեն արտացոլի ժողովրդի պատմական անցյալը, նրա կենցաղը, մշակույթը, սովորությունները՝ այն էլ ոչ միայն քրիստոնեության շրջանից, այլ շատ ավելի վաղ ժամանակներից սկսած։

1850 թ. Թիֆլիսում հիմնադրված ռուսական աշխարհագրական ընկերության Կովկասյան բաժանմունքը 1852 թ. հիմնեց իր թանգարանը, որը սկսեց հնագիտական պատմական, ազգագրական նյութեր հավաքել ոչ միայն Անդրկովկասի (այդ թվում նաև Հայաստանի), այլև Հյուսիսային Կովկասի վերաբերյալ։ Սակայն այդ թանգարանը երկար կյանք չունեցավ, որովհետև նրա ժողովածուները մտան 1867 թ. Թիֆլիսում հիմնված Կովկասյան թանգարանի գույքի մեջ։

Այդ ժամանակից սկսած Հայաստանում գտնված թանգարանային ամեն մի իր ռուս պաշտոնյաները տանում էին Թիֆլիս, իսկ երբեմն էլ Մոսկվա ու Պետերբուրգ։

Բացառություն էին կազմում միայն էջմիածնի միաբանները, որոնք իրենց գտած առարկաները պահում էին տեղում և քանի որ էջմիածինը չուներ հնագիտական թանգարան, դրանք մնում էին վանքի բակում, բաց երկնքի տակ։

Անդրկովկասում գիտական պեղումների հիմքը դրեց հնագետ-պատմաբան Աղեքսանդր Երիցյանը։ Նա 1871 թ. առաջին անգամ դամբարանների պեղումներ կատարեց Սանահին և Հաղբատ գյուղերի միջև գտնվող Ոռնակ (այժմ Ակներ) գյուղի սահմաններում և պեղածո առարկաները տեղափոխեց Թիֆլիս։

1881 թ. Թիֆլիսում հրավիրվեց հնագետների V համագումար, որի նախապատրաստական շրջանում նոր թափ ստացան նաև հնագիտական ուսումնասիրություններն Անդրկովկասում։ Հայաստանում ևս կատարվեցին հետազոտություններ։ Գրաֆ Ուվարովը, որ գլխավորում էր հնագիտական համագումարը, Աղեքսանդր Երիցյանի օգնությամբ պեղումներ կատարեց

Արմավիր բլուրում։ Ուսումնասիրվեցին նաև Արաքսի հովիտը, Սևանա լճի ափերը և այլ վայրեր։ Այդ բոլոր վայրերի պեղածո նյութերը հանձնվեցին Կովկասյան թանգարանին։

Էջմիածնի միաբաններից հնագիտական աշխատանքով սիստեմատիկ զբաղվում էր Մեսրոպ Սմբատյանցը։ Նա 1862 թ. սկսած հնություններ էր որոնում և դրում դրանց մասին։ Սմբատյանցը Արմավիրում և նրա շրջակայքում ի հայտ բերեց մի շարք սեպագիր արձանագրություններ, որոնցից շատերը տեղափոխեց Էջմիածին։

1892 և 1893 թթ. պրոֆ. Նիկողայոս Մառը պեղումներ կատարեց Հայաստանի միջնադարյան մայրաքաղաք Անիում, և իր գտած առարկաները տարավ Պետերբուրգ։ Երբ Մառին մեղադրեցին, թե Հայաստանի հնությունները դուրս է տանում, նա, իրավամբ, պատճառաբանեց, որ Հայաստանում թանգարաններ չկան, որոնց կարելի լիներ հանձնել պեղածո իրերը։

Այդ վիճակից դուրս գալու համար Խրիմյանն, իր կաթողիկոսության տարիներին (1892—1907), Էջմիածնի սինոդի հին շենքը քանդեց և նրա տեղում, Ներսիսյան լճի մոտ, կառուցեց չորս ընդարձակ դահլիճներով թանգարանի շենք, որ ժողովուրդը կոչեց հայրիկյան թանգարան։ Թանգարանն ուներ երկու բաժին՝ պատմահնագիտական և ազգագրական։

Պատմահնագիտական բաժինը շատ արագ հարստացավ։ Այնտեղ տեղավորեցին Մեսրոպ Սմբատյանցի հավաքած ուրարտական սեպագիր արձանագրությունները, պատահականորեն բացված դամբարանային նյութեր, ճարտարապետական և քանդակազարդ բեկորներ, հունարեն և լատիներեն արձանագրություններ, քարե և կավե դագաղներ, ապակյա սրվակներ, միջնադարյան հուշարձանների քարե դռներ և բազմաթիվ այլ առարկաներ։ Թանգարանի այդ բաժնի հարստացմանը մեծ չափով օժանդակեցին գիտնական միաբաններ Սահակ վարդապետ Ամատունին, Գալուստ և Մխիթար Տեր-Մկրտչյանները, Մեսրոպ Տեր-Մովսիսյանը (Մագիստրոս), Խաչիկ վրդ. Դատյանը, Գարեգին Հովսեփյանը և ուրիշներ։

Ազգագրական բաժինն սկզբում աղքատիկ էր։ Այնտեղ էին պահվում պղնձե անոթներ, Կարնո և Զանգեզուրի կանացի զգեստներ, ձեռագործ գորգեր, փայտի փորագրության և արծաթյա զարդեր, ասեղնագործության նմուշներ։ Բաժինը զգալի չափով հարստացավ առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, երբ Էջմիածինը լցվեց արևմտահայ գաղթականներով։ Թանգարանն այդ ժամանակ ձեռք բերեց ազգային զգեստի լավագույն նմուշներ, բացի այդ, նկարիչները գաղթականներին նկարեցին իրենց տարազային զգեստներով և տրամադրեցին թանգարանին։

Հայրիկյան թանգարանում կենտրոնացվեցին գործածությունից դուրս եկած խաչկալներ (որոնցից լավագույնները 1721 թ. Զմյուռնիայում պատրաստածներն էին)։

Թանգարանն ուներ բազմաթիվ յուղաներկ նկարներ, որոնց թվում՝ նշանավոր նկարիչների գործեր (Այվազովսկի, Վարդգես Սուրենյան, Եղիշե Թագեոսյան, Հովնաթանյանների մի քանի ներկայացուցիչներ և ուրիշներ)։ Այնտեղ էին պահվում նաև հնդկահայերի նվիրած վարագույրներ, գաղտակուրե զարդերով դռներ, կաթողիկոսական բազմաթոռ և այլն։

1920 թ. թանգարանը պետականացվեց, իսկ 1930-ին նրա գույքը հանձնվեց Հայաստանի կուլտուր-պատմական թանգարանին։

XX դարասկզբին Թիֆլիսի հայոց եկեղեցական առաջնորդարանում զանազան ժամանակներում պատրաստած եկեղեցական բազմաթիվ իրեր էին հավաքվել, որոնք պահվում էին եկեղեցու ներսում և առաջնորդարանում։ Իսաքվեցի մեծահարուստ Ավետիս Ղուկասյանը առաջնորդարանին կից թանգարանային շենք կառուցեց և հատուկ գումար հատկացրեց նրա պահպանման համար։ Այնտեղ կենտրոնացվեցին գործածությունից դուրս եկած բազմաթիվ հին գորգեր, ասեղնագործ սփռոցներ, եկեղեցական վարագույրներ, ծածկոցներ, թագեր, սաղավարտներ, եպիսկոպոսական գավազաններ, կանթեղներ, բուրվառներ, աշտանակներ, խաչեր և շատ այլ առարկաներ։

Նախասովետական շրջանի հայկական թանգարանների մեջ իր բնույթով և ծավալով կարևոր տեղ ունի 1907—1908 թթ. Թբիլիսիի «Ազգագրական-հնագիտական թանգարանը», որ հիմնադրեց «Կովկասի հայոց ազգագրական ընկերությունը», վերջինիս ղեկավար Երվանդ Լալայանի եռանդուն ջանքերով։

Մինչ թանգարանի հիմնադրումը, Ազգագրական ընկերությունը նախապատրաստական զգալի աշխատանք կատարեց։

ա) Նախ կազմվեց մանրամասն ծրագիր թանգարանային նյութեր հավաքելու համար։ Ծրագիրը կազմեց Ա. Տեր-Գրիգորյանը Պետերբուրգի ազգագրական թանգարանի ծրագրի օրինակով, որով առաջնորդվելու էին ընկերության տեղական ճյուղերը ազգագրական թանգարանային նյութեր հավաքելու ընթացքում։ Հայտնաբերված նյութերը մի առ ժամանակ պետք է պահպանվեին գավառներում, տեղական մասնաճյուղերի մոտ և թանգարանի հիմնադրումից հետո միայն փոխադրվելու էին այնտեղ[10]։

բ) Երկրորդ խնդիրը թանգարանի տեղի հարցն էր։ Ոմանք գտնում էին, որ այն պետք է հիմնադրվի Հայաստանի քաղաքներից մեկում, մյուսները պահանջում էին հիմնադրել ընկերության կենտրոնում՝ Թիֆլիսում։

Թանգարանի հիմնադրման կարևորության մասին ծրագրի երկրորդ էջում, որտեղ տեղավորված է խմբագրական մասնախմբի ազդը, ասված է.

«Ի նկատ առնելով այն ահագին նշանակությունը, որ ազգագրական թանգարանը ունի թե՛ մի ազգի ինքնուրույն զարգացումը և թե՛ ընդհանրապես մարդկության էվոլյուցիան բնորոշելու համար՝ անհրաժեշտ է, որ հայերս էլ ունենանք մի այդպիսին, և այն կարերոյն չափ շուտ, որովհետև այժմ չափազանց արագ կերպով փոխվում է հայկական կյանքը և կորչում են ազգագրական իրերը»[11]։

Ներածության մեջ ասվում է, թե պետք է սակայն գիտենալ, որ ժողովրդի ձեռակերտ ամեն մի իրը չէ, որ անպայման ազգագրական նշանակություն ունի, այլ՝ միայն նրանք, որոնք ծառայում են հենց յուր, ժողովրդի կարիքներին։

Այնուհետև նշվում է, որ իրերի նշանակությունը «բացատրելու համար անհրաժեշտ է գիտենալ թե ժողովուրդն ինչպես է նայում այդ բանի վրա, և թե ժողովրդական ստեղծագործության մեջ ի՞նչ հայացք է պահպանվել այս կամ այն իրի մասին։ Ուստի՝ խիստ ցանկալի է, որ գրի առնվեն ժողովրդա-

10 «Ծրագիր հայոց «Ազգագրական թանգարանի համար նյութեր հավաքելու». Թիֆլիս, 1907, էջ 26։ Տե՛ս «Ազգագրական հանդես», գիրք 16, Հավելված։

11 Նույն տեղում։

կան ստեղծագործության մնացորդները՝ հեքիաթները, երգերը, ավանդությունները, առակները, հանելուկները և աղոթքները»։ Իրը ոչ միայն նրա պատրաստման տեխնիկայի արգասիքն է, այլև կյանքի մի հատվածն է, կապված ժողովրդի հետ, ուստի իրի մասին պետք է գրել թե այն որտեղ է ձեռք բերվել, ո՞ւմ է պատկանել, ո՞վ է շինել, ո՞վ է օգտագործել, նրա տեղական անունը և մասերի տեղական անունները, գերադասելի են այն իրերը, որոնք գործածության մեջ են եղել։

Ծրագրի առաջին բաժինը նվիրված է բնակարաններին և հարակից շինություններին ու նրանց պարագաներին օժանդակ շինություններին, տների ներքին կահավորմանը։ Երկրորդը՝ հագուստներին և զարդերին։ Երրորդը՝ տեխնիկական միջոցներին, գործիքներին, փոխադրական միջոցներին, սարքերին, արհեստներին։ Չորրորդը՝ ուտելիքներին և խմիչքներին։ Այնուհետև զբաղմունքներին, իսկ վերջում ընտանեկան կենցաղն ու սովորություններն են հանդես գալիս։

Այս ծրագրով գավառներում սկսեցին ազգագրական իրերի հավաքումը։

1908 թ. Ազգագրական ընկերության արձանագրությունից քաղվածքներ են տպագրված «Ազգագրական հանդեսի» XVII գրքում (էջ 162—163), որտեղ տեղեկություններ կան նաև թանգարանի հիմնադրման մասին։ Այնտեղ, ի միջի այլոց, ասված է, որ հիմնադրվող թանգարանը լինելու է ոչ թե միայն ազգագրական բնույթի, այլ ազգագրական և հնագիտական։

Ընկերության գիտական ղեկավար Երվանդ Լալայանը ազգագրական աշխատանքին զուգահեռ զբաղվում էր նաև հնագիտական պեղումներով։ Նա մեծ թվով դամբարաններ էր պեղել Հայաստանի տարբեր վայրերում և գլխավորապես Սևանի ափերին։ Այդ պատճառով էլ հիմնադրվող ազգագրական թանգարանին միացրել է նաև հնագիտականը, մանավանդ որ Ե. Լալայանի հասկացությամբ այդ երկու գիտություններն իրարից անբաժան են։ Նույն արձանագրությունից իմանում ենք, որ թանգարանը 1908 թ. դեռևս կազմակերպված չէր։ Արձանագրություններից մեկում կարդում ենք.

«Ընկերության խորհուրդը հույս ունի, որ մոտիկ ապագայում, երբ բավականաչափ իրեր հավաքված կլինեն, Ազգագրական ընկերության կենտրոնի և ճյուղերի ներկայացուցիչների ընդհանուր ժողով կգումարվի՝ որոշելու թե ուր պետք է հիմնել այդ թանգարանը, ուր և անմիջապես կտեղափոխվեն այդ բոլոր տեղերում հավաքված իրերը»[12]։

Երվանդ Լալայանը բավական հարուստ մասնագիտական գրադարան ուներ և այդ անձնական գրադարանը նա նվիրեց Ազգագրական ընկերությանը, որով թանգարանին կից հիմնադրվեց մարդաբանական-կովկասագիտական գրադարան։

Ժողովուրդը բարձր գնահատեց Լալայանի նախաձեռնությունները և ինքը ևս սկսեց նվերներ ուղարկել թանգարանին ու գրադարանին։ Նվիրում էին գրքեր, զգեստներ և այլ իրեր, ինչպես նաև փող էին տրամադրում պեղումներ կատարելու համար։

Ի վերջո, թանգարանը հիմնվեց Թիֆլիսում, ուր գտնվում էր նաև ընկերության կենտրոնական վարչությունը։

Առաջին համշխարհային պատերազմը մեծ չափով կասեցրեց մշակույ-

---

12 «Ազգագրական հանդես», XVII գիրք, 1908, № 1, էջ 163։

թի առաջընթացը, որոնց թվում խանգարեց նաև Ազգագրական ընկերության թանգարանի զարգացման և պեղումների ծավալման գործին։

1921—1922 թթ. ձմռանը Ե. Լալայանը, Հայաստանի սովետական կառավարության միջնորդությամբ և օժանդակությամբ Թբիլիսիից Երևան տեղափոխեց Կովկասի հայոց ազգագրական ընկերության թանգարանն իր ամբողջ դույքով ու կահույքով, ինչպես նաև նույն ընկերության մարդաբանական-կովկասագիտական հարուստ գրադարանը, որի գրքերի թիվը հասել էր 20000-ի[13]։

Ազգագրական ընկերության թանգարանի առարկաների թիվը թեև փոքր չէր, սակայն դրանք մեծ մասամբ պատահական բնույթ էին կրում և արտյունք էին զանազան նվիրատվությունների։

Ազգագրական ժողովածուների մեջ ամենից հարուստը զգեստների բաժինն էր, բայց այստեղ էլ շատ քիչ էին լրիվ մասերով ներկայացված հագուստները։ Ե. Լալայանը Վանից բերել էր Ալյուր գյուղացու կնոջ և տղամարդու զգեստ, ժողովածուի մեջ կար Թբիլիսիի հայկական զգեստի լրիվ համալիրներ՝ տղամարդու, կնոջ և երեխայի, ուտիացի կնոջ, շամախեցի տղամարդու, ղարաբաղցի կնոջ զգեստներ։ Սակայն շատ էին նաև տարբեր վայրերից նվեր ստացված կամ ընկերության անդամների ձեռք բերած զգեստների հատ ու կենտ մասեր, թերի տարազներ, ինչպես նաև բանվածքներ, ձեռագործ և ասեղնագործ սրբիչներ, ծածկոցներ, կոշիկներ, նալիկներ, գուլպաներ և այլն, որոնք հեռու էին ամբողջական լինելուց։

Հնագիտական առարկաները հիմնականում բրոնզեդարյան դամբարանային նյութերն էին, որ Ե. Լալայանը ձեռք էր բերել պեղումների միջոցով, իսկ մի մասն էլ նվեր էր ստացել պատահական մարդկանցից։

Ե. Լալայանի Թբիլիսիից բերած նյութերի հիման վրա, 1922 թ. Երևանում, Պետական թանգարանի կազմում հիմնադրվեցին հնագիտական և ազգագրական երկու բաժինները, որոնց երկոսի վարիչն էլ ինքը՝ Լալայանը եղավ։

Նախատովետական ժամանակաշրջանի հայկական թանգարանների շարքում բացառիկ կարևոր տեղ ուներ Անիի հնադարանը, որ կազմակերպվել էր պեղումների ընթացքում։

Ինչպես ասել ենք, 1892—1893 թթ. պեղումներից հետո պրոֆ. Նիկոդայոս Մառը դադարեցրեց Անիի աշխատանքները, պատճառաբանելով, որ հնությունները տեղում պահելու հնարավորություն չկա։ Ահա այդ մասին ինչ է գրում Հովսեփ Օրբելին՝ Անիի հնադարանի գոյամատյանի առաջաբանում.

«Անիի պեղումներից ի հայտ եկած առարկաների զետեղարանի հարցը Մառը բարձրացրել էր դեռևս 1893 թ., այդ նպատակի համար առաջարկված էր Էջմիածնում հիմնարկել մի թանգարան, որտեղ պետք է կենտրոնացվեին

13 Այս գրադարանը հետագայում գրեթե ամբողջությամբ հանձնվեց Ալ. Մյասնիկյանի անվան հանրային գրադարանին։ Թանգարանի գեղարվեստական բաժնում պահվեցին արվեստի վերաբերյալ մի քանի տասնյակ պատկերազարդ գրքեր, հնագիտականում՝ դարձյալ մի քանի տասնյակ դրամագիտության և Հայաստանի հնագիտության վերաբերյալ աշխատություններ, ազգագրական բաժնում ազգագրական ընկերության հրատարակություններն ու դիվանը, գրականության բաժնում՝ հայ գրողների գործերը, մեծ մասամբ հեղինակների նվերներն Ազգագրական ընկերության կամ անձամբ Ե. Լալայանին։

Պատմական Հայաստանի սահմաններում գտնված բոլոր հնությունները։ Ն. Մառի այդ միտքը համակրանքի չհանդիպեց բավարար չափով և նա (Ն. Մառը) ստիպված էր դադարեցնել պեղումները, որովհետև ծայր աստիճան անցանկալի էր Անիի հնությունները տարբեր թանգարաններում ցրելը»[14]։

1904 թ., երբ պեղումները վերսկսել էին, Մառը կրկին հարց բարձրացրեց Անիում թանգարան հիմնելու մասին։ Այդ նպատակով բժ. Հ. Զավրիյանը Բաքվում 950 ռ. գրամ հավաքեց և այդ գումարը Ն. Մառը գործադրեց Անիի հին շենքերից մեկը, որ ենթադրվում էր թե եղել է Բագրատունյաց Աշոտ Ողորմած թագավորի պալատը, իսկ ոմանց կարծիքով էլ՝ Անիի մաքսատունը, որը հետագայում վեր էր ածվել մզկիթի և այժմ հայտնի է Մանուչեի մզկիթ անունով, հնադարանի վերածելու վրա։

Թանգարանի շենքը արագությամբ լցվեց բազմաթիվ առարկաներով, գլխավորապես վիմական արձանագրություններով և մեծածավալ ճարտարապետական բեկորներով։

1907 թ. արդեն ծրագիր էր կազմվել նոր և ավելի ընդարձակ թանգարանի համար, բայց դրամական միջոցների քչության պատճառով 1908 թ. հուլիսի 15-ին հիմնադրվեց համեմատաբար ոչ մեծ թանգարանի նոր շենք, որի կառուցումն ավարտվեց նույն թվականի սեպտեմբերին, իսկ բացումը տեղի ունեցավ հաջորդ 1909 թ. օգոստոսի 20-ին[15]։

Այսպիսով, 1909 թ. Անիի հնադարանն ունեցավ երկու շենք, առաջինը միջնադարյանն էր (Մանուչեի մզկիթը), իսկ երկրորդը՝ նոր կառուցածը։

Առաջինում պահվում էին գլխավորապես պեղածո մանր առարկաները. որմնազարդեր, շենքերի ներքին հարդարանքի բեկորներ, փորագիր փայտի առարկաներ, նկարազարդ որմնամասեր, շքաղյուսներ, դամբարանային իրեր, կավանոթներ, հախճապակյա և ճենապակյա անոթներ, ապակյա առարկաներ, բանվածքների և ասեղնագործ առարկաների մնացորդներ, դրամների ժողովածուներ, սնդկամաններ, եկեղեցական անոթներ, խաչեր, կանթեղներ, բուրվառներ, աշտանակներ և արդուզարդի բազմաթիվ առարկաներ, որոնց մանրամասն ցուցակը կազմել և հրատարակել է Հովսեփ Օրբելին[16]։

Այդ շենքում էր ցուցադրված նաև Գագիկ Ա Բագրատունու արձանը՝ բոլորակ ս. Գրիգոր եկեղեցու կաղապարը ձեռքին։

Նոր կառուցած շենքում Ն. Մառը կենտրոնացրեց աստ ու անդ ընկած վիմական արձանագրություններն ու ճարտարապետական բեկորները, խաչքարերը և այլն։

1912 թ. վերանորոգվեց Անիի բոլորակ Փրկիչ եկեղեցին և վերածվեց հնադարանի, որի մեջ հավաքվեցին բազմաթիվ քարաբեկորներ։

Սակայն այդ երեք շենքերը ևս չէին բավարարում հետզհետե հայտնաբերվող առարկաների պահպանությունը։ Անին ինքը մի թանգարան էր, որն ամբողջապես պետք է պահպանվեր։

---

[14] И. Орбели, Каталог Анийского музея древностей, Аннйская серия, № 3, СПб, 1910, стр. V.

[15] Այդ շենքը կառուցվեց Պետերբուրգի հայ համայնքի և Բաքվի նավթարդյունաբերողների (Մանթաշյան, Ղուկասյան) նվիրաբերած գումարներով։

[16] Каталог Анийского музея древностей, вып. I, Описание предметов первого отделения, составил И. Орбели, СПб, 1910 г. Թանգարանի երկրորդ բաժանմունքի իրերը կարգավորված չլինելու պատճառով ցուցակի մեջ չեն մտել։

Ն. Մառը մեծ հեռանկարներ ուներ Անիում կատարելիք հնագիտական աշխատանքները կայունացնելու և խորացնելու համար։ Նա ցանկանում էր Անին դարձնել Հայաստանի հնագիտական ուսումնասիրությունների կենտրոն։ Այդ նկատառումով նա սկսեց Անիի վերաբերյալ մի քանի մատենաշաբների հրատարակությունը, դրանց թվում՝ Անվո շարք գրքույկները, որոնցում տրված են Անիի հնագիտական առարկաների նկարագրությունները։ Այդ շարքում տպագրվեց նաև այլ գործեր, որոնք կապ չունեին Անիի հետ[17]։

1912 թ. Ն. Մառը հարց բարձրացրեց Անիում հնագիտության ինստիտուտ հիմնելու մասին, որը պետք է կենտրոն դառնար ամբողջ Կովկասի և Առաջավոր Ասիայի ուսումնասիրության համար, սակայն 1914 թ. վրա հասած համաշխարհային առաջին պատերազմը խանգարեց այդ ծրագրի իրագործումը։

1918 թ. թուրքերը ներխուժեցին Անի և ոչնչացրին նրա հնադարանները։

Այսպես ոչնչացավ Անիի հնադարանը, որ այնքան դժվարությամբ Ն. Մառը կազմակերպել էր իր աշակերտների և հայ ժողովրդի բարոյական և դրամական օժանդակությամբ։

Փրկվեց առարկաների միայն մի չնչին մասը

Երբ թուրքերը կրկին անգամ գրավում էին Անին, պեղումների մասնակից, հնագետ Աշխարհբեկ Քալանթարը մի քանի զինվորների և հետագայում բազմավաստակ ուսուցիչ Հովսեփ Գալստյանի հետ զենքը ձեռներին, թշնամու գնդակների տարափի տակ, Անիի հնադարանի իրերի մի մասը փոխադրեցին խարկով գյուղը և փրկեցին կորստից։

Այդ առարկաները մինչև 1926 թ. պահվում էին Սանահնի վանքում, իսկ հետո հանձնվեցին Սովետական Հայաստանի կուլտուր-պատմական թանգարանին։ Անիի հնադարանի կորստից փրկված առարկաների թիվը 2344 է, որոնք գրանցված են Հայաստանի պատմության պետական թանգարանում 1621 համարների տակ։

Անիի այդ հավաքածուն Դվինի հարուստ նյութերի և մի քանի այլ հնավայրերի պեղումներից գտնված հավաքածուների հետ միասին Միջնադարյան Հայաստանի բարձր մշակույթի վկաներն են Սովետական Հայաստանի պատմության պետական թանգարանում։

Նախասովետական շրջանում այսօրվա Հայաստանի քաղաքներում և Կովկասի հայաբնակ վայրերում գոյություն ունեին նաև փոքրիկ մասնավոր թանգարաններ, որոնք ստեղծվում էին անհատների ջանքերով, որոշ ժամանակ բարգավաճում էին, իսկ հետո կազմալուծվում՝ տիրոջ մահվան կամ անհաջողության հետևանքով։

Հիշատակենք դրանցից երկուսը.

Վրաստանի հայաբնակ Ախալցխա քաղաքի կալվածատեր Հարություն

---

[17] Անվո շարքում լույս են տեսել ա) Համառոտ ցուցակ Անվո հնադարանի, կազմեց Ն. Մառ (ռուսերեն և հայերեն), ՍՊԲ, 1906, բ) Реестр предметов древности из VI (1907) археологической кампании в Ани, составил Н. Марр, СПб, 1908 г., գ) Каталог Анийского музея древностей, вып. I, составил И. Орбели, СПб, 1910, դ) Краткий путеводитель по городищу Ани, составил И. Орбели, СПб, 1910, ե) Б. Бартольд, Персидская надпись на стене Анийского мечети Мануче, СПб, 1911, զ) М. Ростовцев, Апаранская греческая надпись царя Тиридата, СПб, 1911.

Բայբուրդյանը մոլի սիրահար էր հնությունների, իսկ ամենից շատ՝ հին դրամների։ Նա կապեր էր հաստատել տարբեր երկրների դրամագետների հետ և նրանցից դրամներ էր ձեռք բերում կամ իր ունեցած ավելորդ օրինակների հետ փոխանակում։ Բայբուրդյանը աստիճանաբար վաճառեց իր կալվածքները, հայկական հնություններ ձեռք բերեց և իր տունը թանգարանի վերածեց։ Դրամագիտական հարուստ ժողովածուներից բացի, նա ուներ հայերեն հին ձեռագրեր, որոնց թիվը 250-ից ավելի էր։ Այդ ձեռագրերի մի մասը մեծ գրքեր էին, իսկ մնացած կեսից ավելին ուշ միջնադարյան հեղինակների փոքրադիր տետրեր, որոնք 1830 թ. Կարնո գաղթականներն Ախալցխա էին բերել իրենց հետ։ Բայբուրդյանի թանգարանում կային նաև հնագիտական և ազգագրական բազմաթիվ առարկաներ։

Գավառում բոլորը գիտեին, որ անթիֆաճի Արթեն աղան ամեն տեսակի հնություններ է գնում և լավ փող է վճարում նրանց համար։

Արևելյան գրամների նշանավոր մասնագետ պրոֆ. Ե. Պախոմովը, մոտիկից ծանոթ էր Բայբուրդյանի դրամների հավաքածուին և գովեստով էր խոսում նրա մասին։

Հարություն Բայբուրդյանի մահից հետո ժառանգ չունենալու պատճառով նրա թանգարանը պետականացվեց (1928 թ.), բայց, դժբախտաբար, տեղում չպահվեց, այլ առարկաները ցրվեցին Վրաստանի մի քանի թանգարանների միջև։ Հին դրամների ժողովածուն հանձնվեց Քութաիսի թանգարանին, ձեռագրերը՝ Թբիլիսիի համալսարանին, մանր ձեռագրերը, որոնք մնացել էին Կարապետ Բայբուրդյանի տանը, ձեռք բերվեցին Հայաստանի համար, որոնք այժմ պահվում են Մատենադարանում։

Նման մի թանգարան էլ կար Ալեքսոլում (Լենինականում), որ հիմնել էր Հակոբ Կարանյանցը։ Նա ունևոր գյումրեցի էր, թեև մասնագիտական կրթություն չուներ, բայց սիրահար էր հնությունների, շրջում էր Շիրակի և Վանանդի գյուղերը, ծանոթանում հնություններին և հավաքում թանգարանային առարկաներ։ Իր տունը հիմնած թանգարանում նա ցուցադրում էր գլխավորապես դամբարանային պեղածո նյութեր։ Այդ թանգարանում կային նաև դրամներ և այլ առարկաներ, որոնց մասին իր աշխատություններում հիշատակում է ճարտարապետ Թ. Թորամանյանը։ Կարանյանն օժանդակել է նաև Անիի հնադարանի հարստացմանը։

Կարանյանի մահվանից հետո, նրա հավաքածուներից 42 առարկա հանձնվեց Հայաստանի պատմության պետական թանգարանին։

Այսպիսով, նախասովետական շրջանում թեև մեծ ջանքեր են գործադրվել հայկական թանգարան ստեղծելու համար՝ սկսած դեռևս անցյալ դարի 40-ական թվականներից, բայց բոլոր փորձերն էլ ձախողվել են՝ թանգարանի գոյության համար անհրաժեշտ պայմանների բացակայության հետևանքով։

Հայ ժողովուրդը ցարական կարգերում թանգարան չունեցավ, որովհետև նա չուներ իր պետականությունը, որը պետք է հովանավորեր և մշտապես դրամական միջոցներով ապահովեր նրան, քանի որ թանգարանը կարող է հարստանալ միայն սիստեմատիկ կատարվող դաշտային ուսումնասիրություններով, որոնք կապված են մեծ գումարների հետ։

Բացի այդ, թանգարանը կարող է գիտական հաստատություն դառնալ միայն բարձր մասնագիտական կրթություն ունեցող աշխատակիցների շնորհիվ, որոնք բացակայում էին անցյալում։ Այս առումով Անիի հնադարանը բացառություն էր, որն ուներ մասնագետներ։ Այս բոլորի հետևանքով է, որ միայն եկեղեցական թանգարաններն են որոշ տեղերում պահպանել իրենց գոյությունը, բայց նրանք էլ իրենց բնույթով և սովորաբար պատահական մարդկանց ձեռքին գտնվելու հետևանքով, չէին կարող անհրաժեշտ չափով օգնդակել գիտության և արվեստի վերելքին։

Հայաստանում իսկական թանգարաններ հիմնվեցին և թանգարանային գործը գիտական հաստատուն հիմքերի վրա դրվեց միայն սովետական կարգերի օրոք, պետական հիմնարկների և հասարակական կազմակերպությունների ամենօրյա հոգատարության շնորհիվ։

ИЗ ИСТОРИИ МУЗЕЕВ АРМЕНИИ

К. Г. КАФАДАРЯН

Доктор исторических наук, профессор

Резюме

Языческие храмы Армении со времен Урарту (VIII в. до н. э.) и до принятия армянами христианства (начало IV в.) являлись хранилищами превосходных произведений искусства. Они часто подвергались грабежу иноземных завоевателей.

В 40-х гг. XIX в. были сделаны безуспешные попытки становления музеев нового типа.

В Советской Армении созданы все условия для основания и дальнейшего развития музеев и хранилищ произведений искусств.